

lium secacul) նշանակութեան, երբեմն կիրարկուած է նաեւ (ինչպէս տեսանք էջ 250-ի մէջ) վայրի լամանի (լատ. Carum carvi) իմաստով, անշուշտ վերջնոյս՝ վայրի ստեպլինի նման հովանեկաւոր ծաղիկ՝ և մանաւանդ անոր տակ-ին ձեւն ու համն ունենալուն համար:

Ամիրոփենք մեր բոլոր ըսածները.

1. — Մեր կարծիքով «Թարգմանութիւն դեղոց»-ի կարտամանա-ն է արբ. قردمانی (Գոռտամանա) բառը՝ որ կը նշանակէ վԱՅՐԻ ՉԱՄԱՆ, Հայ Չաման, լատ. Carum carvi:

2. — Կարդամանա-յին հոմանիշ՝ «Անդրիտակ» բառը կարդալու է Սեդրիտակ որ ձեւացած է պրս. اندر و شاد և Հայ. տակ բա-

ռերէն, և մեր մէջ երկու իմաստով գործածուած է. ա. բուն հարազատ իմաստն է վայրի Ստեպլին, լատ. Tordylium secacul. բ. երկրորդական իմաստը, նմանութեամբ՝ վԱՅՐԻ ՉԱՄԱՆ, լատ. Carum carvi:

3. — Շակոկալ է արբ. شقاق (Շագագոշ) բառը որ կը նշանակէ վԱՅՐԻ ՍՏԵՊԼԻՆ, Մնդրիտակ (լատ. Tordylium Secaul:

Հետեւաբար, ըստ մեր տեսութեան, Հ. Ալինեան վրդ.ի ստուգաբանած երեք բառերէն՝ ԿԱՐԴԱՄԱՆԱ, ԱՆԴՐԻՏԱԿ, ՇԱՇԿՈԿԱԼ, և ո՛չ մէկը «տեսակ մը կոտիմն» նշանակութիւնը ունեցած չէ երբեք:

Հ. Ս. ՖԵՐԱՀԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՓԵՍԱՑԻ (ԵՊՍ.)

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Շար. տես Բազմավէպ, 1934, էջ 211)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԲ.

Վասն դեսպանացն Հոռոմոց և Պարսից, որք ցոռնարեին ի գրոշու սահմանացն երկուցոսն պետութեանց, առ ի խօսել ընդ միմեանս դատել և սահմանել. և մեղադիր շինեին իրեւրաց վասն այնչափ պատերազմացն եղերոց:

Յետ այնորիկ դարձեալ դէպ լինէր յամին 887 զերիս ի խորհրդականաց (ի ծեւրակոտէն) հրեշտակութեամբ առաքել ի սահմանագլուխ անդր, որք էին թէոդորոս Պատրիկ որդի Պետրոսի Մագիստրոսի և հիւպատականքն Յովհաննէս և Պետրոս ի տանէ կայսեր Անաստասի հանդերձ Զաքարիայի բժշկապետաւ և սովետաւ. իսկ ի կողմանէ Պարսից Մերոտէս, այլովք

հանդերձ, և երթեալ նստէին ի Դարա քաղաքի, որ էր ընդ իշխանութեամբ Պարսից: Եւ սկսան դատել և քննել ի միասին ի վերայ եղելոցն անցելոց ի մէջ երկուց պետութեանց, երկուքին կողմանքն եւս բողոք բարձեալ ասէին. Դուք անիրաւեցայք առ մեզ գործելով զայս ինչ և զայն. զնոյն ասէր և միւսն, որք և այլ փութիւն յաբուցեալ ասէին. Դուք լուծէք զղաշն խաղաղութեան, որ ի մէջ մեր էր, և անցեալ ի սահման մեր աւերեցէք զերկիրն: Այլքն ասէին. Արաբացիք ձեր յաշխարհ մեր մտեալ աւերեցին: Եւ զայս օրինակ նըստեալ նոցա ընդդէմ իրեւրաց զանգատէին, դատէին և քննէին և այսպէս զգործս միմեանց, մինչեւ ծագել նախատական և արհամարհական բանից: Ահա զայս օրի-

նակ խօսելով և լսելով անցուցանէին աւելի քան զամ մի, և իւրաքանչիւր կողմն ծանուցանէր իւրուան թագաւորի: Եւ քանզի կայսրն Յուստինոս ի նմին ժամանակի հիւանդացեալ էր, վասն որոյ աստուածասէր Կեսարն Տիրեւրիոս առնոյր և տայր պատասխանի: Եւ թէպէտեւ երկուքին եւս կողմանքն հաճէին ընդ հաշտութիւն, սակայն տակաւին հակառակէին միմեանց, զի մի՛ զիջանելն կարծեսցի նուաստօրէն հպատակել: Կեսարն Հոռոմոց տայր զեկուցանել Պարսից, ասելով. Փառք են մեզ սրով մերով առնել զխաղաղութիւն: Եթէ կամիս զհաշտութիւն՝ անտի ոչ հրաժարիմք և մեք. իսկ եթէ զպատերազմն՝ ոչ խոնարհիմք առաջի քո, այլ պատրաստիմք կալ ի դիմի: Իսկ Պարսիկն խորհէր, պահանջել երիս տաղանդս վասն երկից ամաց խաղաղութեան. և տակաւին ի նոյն միտս էր, և յայտնապէս ասէր. Ես ընդ Հոռոմոց յայնժամ առնեմ խաղաղութիւն՝ յորժամ եթէ հատուցեն ինձ ամ ըստ ամէ տաղանդ մի: Զայս լուեալ Կեսարու ետ գրել առ նա. Մեծապէս սխալես՝ կարծելով եթէ տէրութիւն Հոռոմոց տայցէ քեզ դահեկան մի և եթ վասն խաղաղութեան. արդ մի՛ համարիցիս եթէ արծաթով գնիցեմք զհաշտութիւն, այլ եթէ կամք իցեն քեզ՝ առնել ընդ մեզ հաշտութիւն՝ պահելով զարժանաւոր պատիւ երկուցուն եւս թագաւորութեանցս, եղիցի, ապա թէ ոչ ընտրեսջիր քեզ զպատերազմն: Իբրեւ լսէր Պարսիկն զայսպիսի պատասխանի, ոչ սակաւ զանգիտէր, և հաւանէր և ցանկայր յաջողելոյ խաղաղութեան առանց արծաթոյ: Լուեալ Կեսարու զպատասխանին, զրեաց առ նա և ասէ. Գիտասջիր, զի թագաւորութիւն Հոռոմոց չեղեւ երբեք նկուն, այլ միշտ հզօր և ումեք երբեք ոչ ծառայեաց. և ես ոչ գիտեմ, եթէ ընդէ՞ր բնաւ կայսերքն առաջինք այնչափ նուաստութիւն յանձն առին մինչեւ ամի ամի վճարել տաղանդս հինգ՝ Պարսից: Բայց արդ գիտասջիր զի թագաւորութիւնս Հոռոմոց յայսմհետէ և առ յապա ոչ քեզ և ոչ այլու, թէեւ հինգ դրամ իցէ, ոչ հա-

տուցէ. մանաւանդ զի, դեսպանք քո առաջի բարբարոս ազգին թուրքաց պանծալով ասէին եթէ Հոռոմք անկան ի ծառայութիւն և հանգոյն ծառայից հարկս հարկանեն: Արդ եթէ դու զայս ոչ արգելուցուս, յայնժամ և ես ընդ քեզ ոչ առնիցեմ հաշտութիւն: Եւ յետ սահմանելոյ բազում ինչ, և ոչ միայն թողութիւն միայն Հայոց, այլ շնորհս թեթեւութեան հարկաց, ետ յօրինել զղաշինս հաշտութեան և առաքել ի սահմանագլուխն առ դեսպանս: Եւ զայն եւս իբրեւ գիտաց Կեսար եթէ Պարսիկն յօժար է յանձն առնուլ զհաշտութիւն, առաքեաց պատուէր ասել զՊարսիկն, թէ տուր մեզ զքաղաքն Դարա, և մեք արասցուք ընդ քեզ խաղաղութիւն: Զայս լուեալ Պարսիկն, խռովէր յոյժ ընդ այն և գրեալ ասէր. ԶԴարա ստացեալ է իմ օրինօք պատերազմի, այլ դու գերկիր ծառայից մերոց զՀայոց՝ ոչ պատերազմաւ ստացար, և ոչ այնու օրինօք ունիս. տուր ինձ զՀայաստան և ես տաց քեզ Գարա: Այլ Կեսարու ծանր թուէր թողուլ զաշխարհն Հայոց, զազգ քրիստոնեայ, զի և նոքա յայն սակս ի քրիստոնեայ թագաւորութեան լեալ էին անձնատուր. ապա վասն այսր պատճառի գփտէին յոյժ ընդ միմեանս դեսպանք երկուցունց կողմանցն՝ մինչեւ դիմել ի գէն՝ առ ի տալ մարտ պատերազմի ընդ միմեանս: Այսպէս ցասուցեալ բաժանէին յիրեւրաց և ի դերեւելանէր գործ խաղաղութեան, և պատրաստէին յերկուցունց կողմանց ի պատերազմ: Իսկ դեսպանն Պարսից կոչեցեալ զհրամանատարս զօրաց իւրոց, զգուշացուցանէր զնոսա և ասէր. Երթայք զգուշացարուք սահմանացն, զի Հոռոմք ոչ կամին զհաշտութիւն:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԳ.

Յաղագս չարեացն զոր վաղմտակի յառարան յայնուիկ անցուցին Պարսք ընդ Հոռոմս:

Մեծ մարզպանն Պարսից Ալէքսանդր, որ ընդ դեսպանսն Հոռոմոց խօսէր զղաշն խաղաղութեան, յորժամ ի դերեւելին պայ-

մանք հաշտութեան, և զի ի դեսպանաց անտի անարգեալ լինէր, առ զայրոյթ սըր- տին դառնացեալ՝ անդէն վաղվաղակի զօր զուսմարէր երթայր, աւերէր, քանդէր, ի հուր դատէր զբովանդակ գաւառս Դարայի, Թելայ, Թելքեսմայ և Ռեսենայ, նոյնպէս և ի Միջագետս գաւառն մեծամեծս, զե- կեղեցիս և զվանորայս, և զամենայն սահ- մանս երկրին. քանդելով, այրելով և կո- տորելով, եկն եհաս ի Թելա, և ասէ ցնո- սա. Տուր մեզ զքաղաքդ, զի մի և ընդ ձեզ այնպիսի անցք անցանիցեն, որպէս ընդ Դարացիս անցին, որք ի սպառ ջըն- ջեցան: Արդ ո՞ւր իցեն դեսպանք ձեր որ այնպէս սպառնային մեզ: Թող եկեալ վա- նեցեն զմեզ: Իսկ ընկերէքն Թելայ տա- յին նմա պատասխանի. Մեք զքաղաքս տալ ձեզ ոչ կարեմք, զի ընկալաք զիր. եթէ Յուստինիանոս պատրիկ առեալ ընդ իւր 60,000 Լոնգորարտացիս ելեալ ի ճա- նապարհ գայ այսր: Եթէ մեք արդ ան- ձնատուր լինիմք ձեզ. յայնժամ եկեալ նորա իսկոյն ջնջեսցէ զմեզ յերեսաց եր- կրի: Չայս լուեալ մեկնեցան անտի և գնացեալ հրոյ ճարակ ետուն զմեծաշէն եկեղեցի Աստուածածնի որ արտաքոյ քա- ղաքին, գործելով և այլ չարիս: Դառնա- յին ապա անդէն ի Դարա այսպանելով զՀոռոմ և պարծելով ի վերայ ապակա- նութեանցն և աւերմանցն զոր գործեցին ի վերայ գերեաց և բազում աւարացն զոր տարեալ էին ընդ իւրեանս:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԴ.

Յաղագս Կոմսին Մօրիկայ և ուրիշ և դա- ռաճանոսքեան Պարսից և աւերակաց նոցա:

Հակառակեալ իրերաց զօրավարքն Հո- ռոմոց՝ ոչ կամէին միաբանել և գրէին առ կայսրն ի նպաստ կամ հակառակ թշնա- մանելով այր զընկեր: Չայս տեսեալ առ- տուածասէր կեսարուն՝ կոչեաց զմի ոմն յիւրոց անտի որոյ անուն էր Մօրիկ, զոր կացուցեալ էր փոխանակ իւր գլուխ պա- հայուզից¹, վասն այնորիկ և Կոմս ան- ուանէր, ետ հրաման նմա երթալ յարեւելս

իրրեւ ընդհանուր Սպարապետ, ունել լիով իշխանութիւն հրամայելոյ, կարգելոյ և վարելոյ զամենայն զօրավարս և զիրաւունս դատաստանաց ամենայն բանակին. և մի ու- մեք՝ ըստ հրամանս և ըստ բանս բերանոյ նո- րա՝ իշխել անցանել. ետ նմա և իշխանու- թիւն հաստատել ի պաշտաման և ընկենու- որպէս զիարդ հաճոյ թուէր նմա: Եւ տուեալ բազում տաղանդս ի ռոմիկ զօրականին, արձակեաց յիւրմէ: Բայց յառաջ քան զնա առաքեալ էր անդր ի քննութիւն իրաւանց զԳրիգորիոս ոմն պրեստորապետ, զի հըս- կեսցէ ի վերայ թոշակաց զօրուն և մա- տակարարեացէ: Եւ նորա երթեալ անդէն իսկ ի Հայաստան ընդ այլոցն կանգնէր յաղթանակ: Իսկ բազմայաղթն Մօրիկ ըստ ընկալեալ հրամանաց եւ իշխանութեան չոգաւ նախ յերկիրն Կապադովկիոյ, զի և էր նա հայրենեօք յաշխարհէ անտի, և վաղվաղակի ժողովէր, կուտէր նա յամենե- ցուն որ ընդ Հոռոմոց տէրութեամբ էին զօր բազում, որոշէր և բազում պահակս և անձնապահապետս², և առեալ զնոսա և զզօրսն որ անդէն կային, նաեւ ի Վրաց և յԱսորւոց ժողովէր գունդստուար, կար- գէր կազմէր զնոսա, և ապա երթեալ նըս- տէր ի Վրացի, ընդ մէջ սահմանացն Հայոց և Ասորւոց: Պատուէր հրամանի տայր ա- մենայն զօրավարացն գալ ժողովել առ ինքն, խօսէր ընդ նոսա, յարգարէր կար- գէր, տայր հրաման, հաստատէր և արձա- կէր զնոսա: Չամիսս երկուս կայր մնայր անդէն, և համբաւ անուան նորա մեծապէս հռչակեալ տարածանէր և զողային ի նը- մանէ ամենայն զօրքն Պարսից, տեսեալ զզօրսն Հոռոմոց բազմաթիւս և հզօրագոյնս քան զինքեանս: Եւ զի անդէն մերձ գլուխ նոցա յերկրիւ լինէին, խորհեցան զործ նենգութեան. և ընդ կողմանս Պարսից շըր- ջան առեալ մտին ի Հայաստան. և առա- քեալ ասեն ցրնակիչս Թէոդոսուպոլսի. Կազմեցարուք յետ երից աւուրց պատե- րազմել ընդ մեզ: Իսկ Հոռոմոց առեալ զայս լուր իսկոյն առաքեալ ծանուցին առ

1. Comes excubitorum. — 2. Scribonos.

Կոմսն Մօրիկ, և ետ նա պատուէր բովան- դակ զօրուն պատրաստել ի մարտ պա- տերազմի: Այլ Պարսիկքն յետ առաքելոյ հրաւէր պատերազմի խնդրէին նենգել և խաբել զՀոռոմս: Ժողովեցան, կազմեցան և անցին ըստ սահման երկրին իւրեանց, և եկեալ զաղտ կացին հանդէպ Նիփրկեր- տոյ, ի միջագետս, յերկրին Հոռոմոց, և սկսան այրել և աւերել զամենայն կող- մանս Ծոփաց, և մանաւանդ զեկեղեցիս և զվանորայս, նոյնպէս և զբովանդակ Սմղացւոց գաւառն: Եկին հանդէպ քաղա- քին Ամղայ, զբովանդակ շրջակայս մինչեւ հուպ առ պարիսպսն զամենայն այրէին, զհոյակապ եկեղեցիս և զվանորայս, և պաշարեալ կացին զքաղաքաւն զաւուրս երիս: Եւ իրրեւ տեսին եթէ ոչ կարեն առ- նուլ զայն, և միանգամայն երկուցեալ, եթէ գուցէ յանկարծ ի վերայ հասցէ Մօ- րիկ զօրօք իւրովք, և զի ապականել զեր- կիրն կամէին, վասն այնորիկ այրէին և յաւար առնուին զամենայն կողմանս Մի- ջագետաց, և բազում աւարաւն դառնային յաշխարհն իւրեանց: Արդ իրրեւ Հոռոմք ըստ պայմանի ժամադրութեան կազմեալ մնային պատերազմի, դաւաճանեցին զնո- սա պարսիկքն, այնպէս ուրեմն աւազակ- օրէն յարձակեալ զաղտագողի յաւար առ- նուլ, յայրել, ի քանդել և ի մերկացու- ցանել զբովանդակ Միջագետս, յամին Ա- դեքսանդրի 888, ի նմին տարւոյ, յորում և Մօրիկ մեկնեցաւ ի Մայրաքաղաքէն: Եւ այսպէս առեալ զօրացն Պարսից զգերին և զամենայն զոր գտին փութով մեծաւ փախեան յաշխարհն իւրեանց, առ ահին Հոռոմոց, և յաւուրս ութեւտանս գործեալ զայս ամենայն ապականութիւն՝ դարձան յերկիրն իւրեանց:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԵ.

Յաղագս գործոցն Մօրիկայ որ յետ այսոցիկ:

Եւ իրրեւ զամենայն լսէր Կոմսն Մօրիկ ցասուցեալ բողբէր յանհնարին բարկութիւն

և ժողովեալ զամենայն զօրս իւր կալաւ զճանապարհն Արգնոյ, որ էր մի ի ճոխա- գոյն գաւառացն Պարսից, զնայր նա անդր այնպիսի տագնապաւ բարկութեան մինչև խաբիլ նմա ի Պարսից և ծանակ լինել, զի եկեալ էր նոցա, քանդեալ՝ առեալ գերի բազում ի Հոռոմոց, և փախուցեալ անտի երթեալ հասեալ մինչև ի Տիգրիս յաղ- թութեամբ: Խաղաց անդր Մօրիկ՝ վարեաց ի գերութիւն զամենեսին, աւերէր և այրէր զամենայն երկիրն: Այլ քանզի մարդիկ երկրին աննենգ և ճշմարիտ քրիստոնեայք էին, առեալ զսուրբ սպասս, զխաչ և զա- լետարան ելանէին ընդ առաջ զօրաց և զօրապետաց, և խնդրէին խոստումն երդ- ման ազատութեան կենաց իւրեանց, ասե- լով. Ողորմեցարուք մեզ, զի և մեք իրրեւ զձեզ քրիստոնեայք եմք, և պատրաստք ի ծառայել քրիստոնեայ Կայսեր ի պա- տերազմունս: Մաւրիկիոս և որք ընդ նմա իրրեւ լուան զայս ի բազմաց ի նոցանէ, արարին նոցա շնորհս և ասէին. Ամենայն ոք որ ի ձէնջ կամիցի կեալ և ծառայել քրիստոնեայ թագաւորի, առցէ զինչս իւր և զանասունս և ելեալ մեկնեսցի աստի և կեցցէ, և մեք ոչ սպանցուք զնա. բայց եթէ յետ երկուց և երից աւուրց գտանեմք զոք աստ՝ մահու մեռանիցի: Այսպէս մե- ծաւ մասամբ բնակիչք երկրին Արգին ա- պրէին ի մօտալուտ կորստենէն, և փա- խուցեալ անցանէին յաշխարհն Հոռոմոց: Իրրեւ եհաս լուրս այս յականջս կայսեր, հրամայեաց տանել զնոսա ի կղզին Կիպ- րոս և բաժանել զնոսա յամենայն տեղիս շինից կղզւոյն և բնակեալ մնացին անդ: Իսկ Պարսիկք, որք խաբէութեամբ և յեր- կիւղէ Մաւրիկիոսի անկեալ յերկիրն Հոռո- մոց, հրոյ ճարակ տային, և առ ի ճողո- պրել ի ձեռաց նորա՝ շրջեալ այսր անդր այրէին և աւերէին, յոր ինչ և ձեռնհաս լինէին յաւուրս հնգեւտասան, շտապ տագ- նապաւ մինչչեւ հասեալ առ նոսա Մօր- կայ, փախուցեալք յերեսաց նորա գնային յաշխարհն իւրեանց:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԶ.

Թե որպէս Մոսկովայի Բար—Խարեւոյ և Մոսկովայի միաբանական ընդհանուր Պարսից:

Յետ այսորիկ Մորիկ և Մոսկովայի Բար—Խարեւոյ թագաւորն Արարացոց ժողովեալ ի մի զգորս իւրեանց՝ միաբան արշաւեալ գնացին յաշխարհն Պարսից ընդ ճանապարհ անապատին, ոչ սակաւ փարսախս, մինչեւ հասին ի սահմանս Արամայ: Եւ ժամանեալ նոցա ի կամուրջն մեծ՝ որ հանէ յաշխարհն Արամայ, ընդ որ կամէին անցանել և յաւարի առնուլ զընտիր ընտիր քաղաքացն Պարսից, գտին զայն քակեալ, քանզի լուեալ Պարսից զգալուստ նոցա՝ կործանեալ էին զկամուրջն: Արդ տեսեալ նոցա զայս և զօրաց իւրեանց, նուաստութիւն անձանց համարէին, մանաւանդ Հոռոմը: Ծագէր ի մէջ նոցա և Արարացոց խռովութիւն և դառնային յետս վայրապար յանօգուտ, այլ և ի վերայ այնքան կորանացն՝ հազիւ իմն կարէին փրկել զանձինս և ժամանել յերկիրն Հոռոմոց: Ապա զրեալ չարախօսէին զիրերաց, զի Մորիկ կասկածանօց իմն ասէր զՄոսկովայէ, եթէ ազդ արար նա յառաջագոյն Պարսից և խրատ ետ քակել զկամուրջն, զի մի կարացն անցանել, և ոչ էր ճշմարիտ: Բայց ոչ սակաւ աշխատութիւն լինէր կայսեր, հաշտեցուցանել զնոսա ընդ միմեանս, և ոչ յաջողեցաւ թէպէտեւ բազումս յորդորեաց զգորավարսն զերկոսին: Հուսկ ապա Մորիկ գնայր առ կայսրն. և չէ յայտ եթէ և անդ եղեւ ամբաստան զՄոսկովայայ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԷ.

Թե որպէս Մարգարէն Պարսից չոգաս դարձեալ յերկիրն Թեւացոց, հրձիգ արար և առերես զայն, և զերկիրն Եղեւացոց և զԽաւսանացոց:

Տեսեալ Պարսից, եթէ Մորիկ և Մոսկովայի դարձան յաշխարհն իւրեանց, և զի տացեալ թէ դատարկացեալ է երկիրն ի զօրաց, Մարգարէն Պարսից Աղէրմէն առնոյր ընդ իւր զօր բազում և եկեալ մտանէր

ի սահմանս Հոռոմոց: Անկանէր ի վերայ գաւառին Թեւայ և Հոռոմնայ, քանզի և այրէր զամենայն, որ ինչ յառաջին ասպատակութենէն մնացեալ էր զերծ, և խաղայր գնայր անտի ի սահմանս Եղեւսիոյ, զի էր ճոխ, և յամենայն սահմանս երկրին Արզնոյ սփռէր հուր և աւեր: Ապա մեծաւ վատահուլիւսով և աներկիւղ դարձեալ գնայր յաշխարհն իւր, որպէս թէ յաշխարհի իւրում կեցեալ աւուրս բազումս: Եւ ամենայն ուրեք ուր և գնաց աւերեաց զամենայն, և ոչ եթող տուն մի կանգուն զկնի իւր. և ծաղր առնէր զգորսն Հոռոմոց, զի ոչ կարացին վարել գնա յաշխարհէն իւրեանց: Այլ յետ դառնալոյ Մորիկայ և Մոսկովայի կորագլուխ և տըրտում յերկրէն Պարսից, լուեալ եթէ պատրաստին դարձեալ գալ ի վերայ իւր, ազդ արար նոցա, ասէ. Լսեմ թէ կամիք գալ ի վերայ իմ պատերազմաւ. արդ մի ինչ աշխատ առնէք բազում արշաւանօց նըրքեցուցանել զգորս ձեր, հանգերուց այդէն. և ես ինքնին գամ առ ձեզ: Եւ յետ զայս ամենայն առնելոյ նորա, քանդելոյ, այրելոյ, գերելոյ և յափշտակելոյ, ի լսել եթէ գնա պատերազմել ընդ նմա, փախուցեալ ի սահմանացն Եղեւսիոյ չոգաւ յերկիր իւր առանց հալածելոյ ուրուք ի քսան բիւրուցն Հոռոմոց, որք ուտէին զհաց կայսեր. այլ յորժամ նա ի բաց գնաց և ոչ կարէին ժամանել նմա, յայնժամ երթային տալ ընդ նմա պատերազմ, և ասէին, թէ փախեաւ գնաց:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԸ.

Յաղորտիսն Մոսկովայի Բար—Խարեւոյ:

Ժողովեցան առ Մոսկովայի Բար—Խարեւոյ ամենայն զօրք Պարսկական Արարացոց, և ի նմին ժամանակի զօրք Պարսից, զնոյն օրինակ պատրաստէին յարձակել հարկանել զՄոսկովայի յետ դառնալոյ նորա յարշաւանաց Պարսից: Իբրեւ զիտաց զայն Մոսկովայի, քանզի էր այր հմուտ պատերազմի, ժողովեաց զգորս իւր, և առաքեալ լրտես տեղեկացեալ զիտաց զօրպիսութիւն

նոցա յանապատի անդ: Եհաս ի վերայ նոցա յանակնկալ պահու յանգէտս նոցին, խռովեաց և շփոթեաց զնոսա, սպան և սպառեաց զբազումս, և կալեալ զայս ետ կապել ի շղթայս և ի կոճեղս, սակաւուց ոմանց եւեթ եղեւ փախստեամբ զերծանել: Անտի անկեալ ի ճանապարհ գնաց ի վերայ ճամբարի նոցա, քանդեալ այրեաց զայն և բազում աւարաւ և գերեօք դարձաւ այսրէն առնելով յաղթանակ պանծալի:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԹ.

Որ ինչ անցք անցին ընդ կալանատըս որք յԱնտիոք եղեալ կային ի դիպահոյ, զոր կատոյց Խոսրով ի սահմանս Պարսից, և զամենայն զերկուսն յերկրէն Հոռոմոց եղեալ պահէր մինչև ցօրս այս:

Յետ առնելոյ Պարսից զԴարա և զԱպամէա, տանէին զամենայն գերիս ի կողմանց անտի յաշխարհն Պարսից. և ի Մծրին առաջի թագաւորին ի համար ածեալ հասանէր թիւ երկերիւր եօթանասուն և հինգ հազար: Իսկ զայս զօրս ոչ բաժանեաց (ի զօրաց), առեալ տարաւ յԱնտիոք և պահէր ի բանտի, զոր ինքն տուեալ էր շինել, յետ նուաճելոյն զԱնտիոք քաղաք: Զի շինեաց յայնժամ քաղաք մի յաշխարհին իւրում և կոչեաց Անտիոք, և զգերիսն զամենայն առեալ յԱնտիոքայ և ի սահմանաց նորին՝ տարեալ փակեաց անդ, նոյնպէս և զգերեալսն ի Դարայէ և յԱպամիոյ և յայլոց տեղեաց, զօրս մի ըստ միոջէ վարեալ էր: Սոքա թէպէտեւ ի խիստ բանտի կային և ի զգուշութեան պահապանաց, սակայն ոչ ի բաց կային ի խորամանկութենէ որովք որպէս կարծէին գտանել օգնութիւն: Եւ զաղտ հնարէին խորհուրդ նենգութեան պատրելով զոմն ի Պարսից ի կամս իւրեանց, յայնցան՝ որք պահ ունէին բանտարկելոցն և պարսպացն տուեալ նմա 500 դահեկան, որպէս զի գիշերայն զերկուս ոմանս ի բանտարկելոցն կախեալ չուանաւ ընդ պարիսպն իջուցէ ի վայր ի տեղւոյն անտի ուր կայր պահակ գիշերոյ. գտանէին անդ և երկու

արեղայք Արարացիք, արք առաքինիք, անուն միուսն Բենիամին, և միւսուսն որ աշակերտ է առաջնոյն՝ Սամուէլ: Սոքա իբրեւ ապրեցան ի բանտէն և յապահովեցին զանձինս, պատրաստեցան փութանակի անկանել ի ճանապարհ և երթալ առ կայսրն Հոռոմոց, և զեկուցանել նմա զկալանաւորաց, թէ հազարք հազարաց յԱնտիոքիս կան արգելեալք ի բանտի: Եւ ընդ նմին ամենայն բանտարկեալքն աղաչեցին ասել առ թագաւորն. Թէ աստ եմք մեք առաւել քան երեք բիւր արք ի կապանս, և Պարսիկք որք պահպանեն զմեզ՝ չեն աւելի քան զհինգ հարիւր այր: Եւ եթէ մի ոք եւեթ ի զօրագլխաց Հոռոմոց առաքեացի այսր և երեւեսցի միայն արտաքոյ քաղաքիս, յայնժամ մեք իսկ կարողք եմք սպանանել զամենայն Պարսիկս և ազատեալ զանձինս անցանել յաշխարհն Հոռոմոց: Եւ զայս ամենայն խորհեալ և խօսեցեալ բանտարկելոցն զաղտ ընդ կրօնաւորսն, Պարսիկն որ կաշառաբեկ ի գիշերի կախեալ չուանաւ ընդ պարիսպն զԲենիամին հանդերձ ընկերաւն իջուցանէր ի վայր, և փախուցեալ զերծանէին յերկիրն Հոռոմոց: Նախ երթեալ զեկուցանէին զամենայն կուսակալին Հոռոմոց, և անտի զրով ազդ առնէին կայսեր: Եւ Բենիամինի հասեալ ի Մայրաքաղաքն, զայր առ մեզ, և պատմէր Մագիստրոսին և սա երթեալ զեկուցանէր կայսեր Տիրերի, իսկ կայսրն ոչ հաւատացեալ իրացն անփոյթ լինէր: Եւ այսպէս ազատութիւն եղկելի կալանաւորացն խափանեալ ի դերեւ ելանէր:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ի.

Մահ Խոսրովոյ Պարսից արքայի և ժամանակ իշխանութեան նորա...

Մի համարիցի գործ մեր անպատշաճ՝ եթէ զՄոգուց և զթշնամույ կամիցիմք խօսել, պատմելով զժամանակ և զմահ թագաւորին Պարսից Խոսրովոյ: Եւ էր նա, որպէս և գործք նորա վկայեն, այր խորամանկ և իմաստուն, և հանապազ զամենայն կեանս իւր պարապէր յուսումն իմաստասիրութեան: Եւ որպէս ասի խնա-

մով մեծաւ ժողովեալ առ ինքն զմատենանս
ամենայն կրօնից՝ ընթեռնոյր և ուսանէր
առ ի գիտել թէ ո՞ր իցէ ճշմարիտ և իմաս-
տուն, և ո՞րն յիմարական և ցնորական և
առասպել ընդունայն: Եւ զի՝ զամենայն
ընթեռնոյր նաեւ մտախոհ լինէր, առեալ
ի վեր դասէր քան զամենայն զմատենան քը-
րիստոնէից և ասէր. Սոքա են ճշմարտա-
գոյնք և իմաստնագոյնք քան զամենայն մա-
տենանս այլոցն կրօնից: Քանզի հանապազ
ընթեռնոյր և ընծայէր հաւատս ասացե-
լոցն. վասն որոյ ոչ այնչափ ցուցանէր
զանձն ատեցող քրիստոնէից, որ թէպէտեւ
ի Մոգուց անտի զրգոեալ լինէր ընդդէմ
նոցա, սակայն տակաւին չառնոյր յանձն
յարուցանել հալածանս սաստիկս ի վերայ
քրիստոնէից: Յաւուր միում կաթողիկոսն
նեստորականաց, որ էր յաճախ ընդ նմա,
ծանուցանէր նմա զբողոք իւր ընդդէմ սա-
կաւուց Եպիսկոպոսաց ուղղափառաց, որ
էին ի տէրութեան Պարսից. զի այլ ամենայն
եպիսկոպոսունց աշխարհին պարսից են
նեստորականք. սակաւք ոմանք և եթ գտա-
նին ի նոսա ուղղադաւանք: Իբրեւ կաթողի-
կոսն սաստկապէս չարախօսէր զնոցանէ ա-
ռաջի թագաւորին. հրաման տայր նոցա
թագաւորն գալ և վիճել առաջի իւր ընդ մի-
մեանս զիրաց հաւատոց իւրեանց, զի և ինքն
անձամբ իմասցի և դատեսցէ, զորոց նոքա
վիճիցենն. որպէս զի կարացէ գիտել և
ընտրել զիրան: Եւ յորժամ եկին եպիս-
կոպոսունքն ուղղափառք, հրաման ետ եր-
կոցունց կողմանցն ժողովել և կալ առաջի
իւր. և եկեալ երկոցին կողմանքն կացին
յայսկոյս և յայնկոյս յանդիման թագա-
ւորին, և գլխաւոր եպիսկոպոսացն ուղ-
ղափառաց կոչէր Ախուրմոյ. և էր այր
սրբակաց. ետ պատուէր թագաւորն խօսել
և վիճել ընդ միմեանս վասն հակառակու-
թեան խնդրոց զոր յիրս հաւատոց ունէին:
Ի խօսել կաթողիկոսին ընդ կուսակցաց
իւրոց, սկսաւ բողոք բառնալ ընդդէմ ուղ-
ղափառաց, և կուսակցքն հաւանէին նմա:
Յետ այնորիկ խօսել սկսան ուղղափառք
և հերքել զբանս նորա, և շմորեցուցանէին
զնոսա, կոչելով և զթագաւորն դատաւոր

ինքեանց: Այլ մեք զանց արասցուք զհա-
կաճառութեամբ նոցա, զի կարի երկայն
և դժուարին է զրեւ մի ըստ միոջէ: Իսկ
Խոսրով գովեալ զբանս ուղղափառաց ըն-
դունէր, և դարձեալ առ կաթողիկոսն ա-
սէր. Սոքա զոր ինչ ասեն գիտութեամբ
է, և կարեն զբանս իւրեանց ցուցանել և
հաստատել, որ և ինձ յոյժ ճշմարիտ երեւի.
այլ ձեր բանքդ շփոթ են և մթինք և ան-
հիմն ամենեւին: Ինձ այսպէս թուի, եթէ
ոչ կարէք հաստատել դուք զբանս ձեր.
որք և ինձ երեւին ի սպառ անհիմն և օտար
ի ճշմարտութենէ բանից նոցա: Արդ ծա-
նեայ ի բանիցդ այդոցիկ ձերոց, եթէ դուք
ոչ իրաւամբ և արդարութեամբ ամբաս-
տան եղէք զսոցանէ առաջի իմ, և իմ այժմ
անձամբ տեսեալ և լուեալ, տամ ձեզ հրա-
ման, յայսմհետէ այլ բնաւ ամենեւին մի
մերձենալ առ նոսա և մի ինչ հասուցանել
մնաս: Չայս հրաման լուեալ ի բերանոյ
թագաւորին՝ ուղղափառքն, ի նշան մեծա-
րանաց անկանէին յերկիր և շնորհս մա-
տուցեալ ասէին. Տէր մեր, նոքա հալածեն
զմեզ, յարձակին ի վերայ մեր, յափշտա-
կեն, կործանեն զեկեղեցիս մեր և զվանո-
րայս, և ոչ թողուն մեզ աղօթս առնել առ
Աստուած վասն հաստատութեան և պահ-
պանութեան կենաց և արքայութեան քո:
Յայնժամ հրաման տայր և հաստատէր
և ասէր. Երթայք շինեցէք զեկեղեցիս ձեր,
զվանսդ, և ոչ ումեք այսուհետեւ լիցի
իշխանութիւն մնասել ձեզ: Երկիր պագա-
նէին նմա խոնարհեցուցեալ զգլուխս ա-
ռաջի նորա, և դառնային ի տունս իւրեանց
մեծաւ ուրախութեամբ: Յետ այնորիկ ամե-
նայն ուղղափառք երկրին Պարսից կեցեալ
աներկիւղ վայելէին ի բազում ազատու-
թեան. և յետ ընդունելոյ ուղղափառաց
զայս հրաման, համարձակէին և ինքեանք
գործել զորձ մեծ, ընտրելով իւրեանց ի
կաթողիկոս զերանելին զՏէր Յակոբ զուղ-
ղադաւան եպիսկոպոսն, և այսպիսի ինչ
եղեւ ոչ երբեք այլ ումեք յերկրին Պար-
սից. և կաթողիկոսն հաւատացելոց նստաւ
յաթոռ իշխանութեան իւրոյ, և կայ ի նմին
մինչեւ ցայսօր:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԻԱ.

Դժկամակի խոսրովոս և ցաւոյ ընդ քառ-
ձոռն խաղաղութիւնս երկուց պետոսրեանցն,
տեսեալ զամբաստանս և զկործանումն աշ-
խարհաց և յօժարել զիջանել ի հաշտութիւն:

Մի՛ ոք համարեսցի եթէ գովել ինչ կա-
մեցեալ զՄոգն՝ յիշատակ առնիցեմ պատ-
մութեան նորա, այլ որպէս յառասպելն
Սամփոսնի ի կերչէ ել կերակուր և ի դառնէ
քաղցր, այսպէս և նա էր դառն յոյժ, որ-
պէս օրէն է ասել զհեթանոսէ և զմոլորե-
լոյ, այլ որ ինչ ի նիւթ պատմութեանս
պատշաճի, հարկ է նշանակել զայն ի պատ-
մութեան: Քանզի իբրեւ բարձեալ լինէր
խաղաղութիւն ի սահմանացն, տրտմէր ընդ
այն և ցաւէր, ի ժամուն, յորժամ, որպէս
ասի, թէ ոմն զհրովարտակա խաղաղու-
թեան երկոցունց կողմանց ի մի կցեալ և
յերկինս ի վեր ամբարձեալ ել ընդ առաջ
նորա, մինչդեռ ինքն, թագաւորն Պարսից
մտանել կամէր ի Դարա, ի նմին ժամու-
ասէր նա. Տես մեծդ Աստուած, որ գիտեսդ,
թէ ոչ երբեք արտոժեցի և ոչ կամիմ զայս
ամենայն աւեր և զհեղուծմն արեան մարդ-
կանս՝ որք եղեն ի մէջ երկուց աշխար-
հացս: Եւ յետ այնորիկ իսկ, ի մերձենալ
մահուն, ցուցանէր զինքն յօժար ի զի-
ջումն և կամել զհաշտութիւն, ըստ օրի-
նակին որպէս յառաջն ընդ միոյ միոյ ամի
խաղաղութեան ժամանակին ընդունէր տա-
ղանդ մի ոսկոյ, որպէս և ակն ունէր վասն
երիցն ամաց անցելոց: Եւ սակայն, որպէս
յառաջագոյն պատմեցաք, մինչդեռ դե-
պանք Հոռոմոց և Պարսից ժողովեալ ի
սահմանագլուխ տեղուջ խորհէին վասն
հաստատութեան դաշանց խաղաղութեան,
ցուցաք անդ, թէ որպէս բազմայաղթն Տի-
բեր, մինչ տակաւին կեսար էր, յաւուրս
Յուստինեայ, յորմէ դողային ամենայն զօրք
Պարսից, ազնուական իմն մտօք ձայն իւր
բարձեալ ասէր. Թագաւորութիւն Հոռոմոց
ոչ է ընկճեալ և նուաճեալ՝ անկեալ ի Պար-
սից, և վասն խաղաղութեան ոչ հատու-
ցանեմք բնաւ ամենեւին և ոչ մի տաղանդ:
Եւ եթէ չիցէ հնար հաշտութեան պահելով

զարժանին պատիւ Տէրութեանս, ոչ արա-
րից ընդ ձեզ խաղաղութիւն: Եւ այս պատ-
ճառ լինէր ոչ սակաւ վշտաց և լքման թա-
գաւորին Պարսից: Կոչէր առ ինքն զՄոգսն
և ասէր. Լուր եղեւ մեզ թէ ոմն յազգէն
Հոռոմոց եղեալ իցէ կեսար, այր երիտա-
սարդ և յոյժ պատերազմասէր: Իսկ ես
արդ, որպէս տեսանէքդ, ծերացեալ եմ և
ոչ կարեմ այլ եւս աշխատել և ունել զորձ
պատերազմի, ապա վայելէ մեզ առնել
հաշտութիւն ընդ Հոռոմոց, զի ոչ ինչ կա-
րեմք ստնանել նոցա: Խորհեցան նոքա ի
միջի իւրեանց և առաքեցին ասել Հոռո-
մոց. Մի՛ համարիցիք թէ ես առաւել սի-
րիցեմ և մեծարիցեմ զարծաթ քան զխա-
ղաղութիւն: Արդ եկայք պահելով զպա-
տիւ երկոցունս եւս թագաւորութեանց՝
արասցուք խաղաղութիւն. և ոչ ինչ պա-
հանջեմ ես յայսմհետէ. բայց զի լիցի
վախճան աւերմանցս: Յետ խոստանալոյ
Պարսկին զայս, բազմայաղթ կեսարն Տի-
բեր վերստին զայլ իմն արգել արկանէր
ի մէջ և ասէր. Արդարեւ մի ակն կալեալ
յուսասցիս առնուլ զարծաթն զոր ցարդ
ընդունէիր ի Հոռոմոց, ոչ ընդունիցիս և
ոչ դահեկան մի. զի թագաւորութիւն Հո-
ռոմոց չէ այնպէս տկար՝ որպէս թէ հար-
կատու լիցի: Առ այս Պարսկին առնէր
պատասխանի. Արծաթն, զոր հատուցա-
նէին առաջին կայսերն՝ դաշամբք եղեալ
էր. և դու զայն ոչ պահեցիր հաստատուն,
այլ գիտաւջիր զի ինձ նախամեծար է խա-
ղաղութիւն քան զամենայն, վասն որոյ
հրաժարիմ ի տաղանդոյ անտի եւս. եկ
արասցուք հաշտութիւն: Եւ իբրեւ ետես
կեսարն, թէ խոնարհեցաւ և զիջաւ ընդ
այն Պարսկին, առաքեալ պատասխանի
ասէր. Եթէ դու ոչ դարձուցանես առ քեզ
զԴարա, չառնեմք և մեք հաշտութիւն:
Ծանրացասումն եղեն ընդ այս Պարսիկը և
խնդիր խաղաղութեան ի դերեւ ելանէր. և
գժտեալ ընդ միմեանս հեռացան ի սահմա-
նաց, մինչեւ զէն առնուլ ի մարտ՝ յաւեր եր-
կոցունց տէրութեանց: Ի նմին ժամանակի
մեռանէր Խոսրով թագաւորեալ ամս ԽԶ.
և յաջորդէր զնա որդի նորա յամին 890:

(Շարունակելի)

